




ՍԻՓԱՆ ՔԱՀԱՆԱՅ ՄԽՍԵԱՆ

ՍԻՐՈՅ ԱՌԱՔԵԱԼԸ՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ

Յովհաննէս Զեբեդէոսի եւ Սողոմէի որդին էր եւ կրտսեր եղբայրը Յակոբոսի: Սողոմէ Ս. Կոյս Մարիամի մօրաքրոջ դուստրն էր: Որով կը տեսնենք, թէ Յիսուս մօտիկ ազգականութիւն ունէր Յակոբոս եւ Յովհաննէս Առաքեալներուն հետ: Յովհաննէս իր եղբօրմէն առաջ հետեւեցաւ Յիսուսի եւ յանախ ներկայ գտնուեցաւ Քրիստոսի հետ՝ անոր առաքելութեան ընթացքին: Յովհաննէս իր ազգակցութեամբ եւ համակրելի բնատրութեան պատճառաւ արժանացած էր Յիսուսի յտուկ սիրոյն: Ան համարձակութեամբ կը գրէ ինքն իր մասին, ըսելով **աշակերտն զոր սիրէր Յիսուս** (Յովհ. 13:23, 21:20): Սակայն այդ համակրելի բնատրութեան համընթաց Զեբեդէոսի երկու որդիները ունեցած են նաեւ բուն եւ ցասկոտ բնատրութիւն մը, որուն համար Յիսուս անոնց **Բաներեգէս** մականունը տուաւ, որ կը թարգմանուի **Որդիք Որոտման**: Այդ բնատրութեան որպէս հետեւանք կրնանք յիշել Սամարացիներու վրայ երկինքէն կրակ իջեցնելու առաջարկը (Ղուկ. 9:54) եւ միւս Առաքեալներուն վրայ բարձր դիրք մը ձեռք ձգելու հետամտութիւնը (Մարկ. 10:35):

Առաքելական խումբին առաջին քառեակը՝ Պետրոս եւ Անդրէաս, Յակոբոս եւ Յովհաննէս նախապատուեալ Առաքեալներ էին եւ գլխաւոր առիթներով անոնք միշտ ալ Յիսուսի հետ գտնուած են, ինչպէս Յայրոսի տունը, Այլակերպութեան վայրը, Զիթենեաց լեռը եւ Գեթսեմանիի պարտէզը:

Սիրոյ Առաքեալը կը գրէ. «Նոր պատուիրան կու տամ ձեզի, որ սիրէք զիրար, ինչպէս եւ ձեզ սիրեցի, դուք ալ սիրեցէք զիրար: Եթէ դուք զիրար սիրէք՝ ատով ամէնքը պիտի գիտնան թէ դուք իմ աշակերտներս էք» (Յովհ. 13:34—35):

Առաջին երեք Աւետարանները կը կոչուին «Համատես Աւետարաններ», որովհետեւ անոնք նոյնանման են իրենց մօտեցումով եւ գրութիւններով: Կը կարծուի, թէ Յովհաննէս Առաքեալ միւս առաքեալներէն աւելի երկար կեանք կարծուի, թէ Յովհաննէս Առաքեալ միւս առաքեալներէն աւելի երկար կեանք մը ունեցած ըլլայ՝ ապրելով 100 տարի: Վստահաբար Յովհաննէս Աւետարանիչ իր աշքին առջեւ ունեցած է միւս երեք Աւետարանները, որոնք աւելի

կանուխ գրուած էին եւ ինք չէ ուզած նոյն բաները կրկնել: Ան Աստուածաբանական ու տարբեր տեսանկիւնէ դիտելով Քրիստոսի կեանքն ու գործը՝ ըստ այնմ գրած է իր Աւետարանը:

Յովհաննէս կը ջանայ որոշ չափով ժամանակագրական կարգ մը տալ, ինչպէս «յաջորդ օրը» (1 Յովհ. 1:29, 35, 43): Ան կը ներկայացնէ տրամաբանական եւ ժամանակագրական յաջորդականութիւն մը: Յովհաննէս նոյնպէս ուշադրութիւն կը դարձնէ տեղերու եւ քաղաքներու, ինչպէս «Բեթաբրայի մէջ՝ Յորդանանի միւս կողմը» (Յովհ. 1:28) «Կանա Գալիլիացոց» (Յովհ. 21:1):

Յովհաննէս իր Աւետարանը գրելուն պատճառներէն մին ինք կու տայ, այսպէս. «Յիսուս շատ մը ուրիշ հրաշքներ ալ գործեց աշակերտներուն սուջեւ, սակայն այդ բոլորը գրուած չեն այս գիրքին մէջ: Իսկ այսչափը գրուեցաւ որպէսզի հաւատաք, թէ Յիսուս՝ Քրիստոսն է, Աստուծոյ Որդին, եւ որպէսզի հաւատաք եւ կեանք ունենաք անոր անունով» (Յովհ. 20:30—31):

Վերստին ծննդեան պարագան կը շեշտուի այս Աւետարանին մէջ, մասնաւորաբար երբ Քրիստոս կը խօսակցի Նիկողեմոսի հետ, այսպէս. «Ծըշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ քեզի, եթէ մէկը չծնի ջուրէն ու հոգիէն՝ չի կրնար մտնել Աստուծոյ թագաւորութեան մէջ: Վասնզի մարմինէն ծնածը մարմին է եւ հոգիէն ծնածը՝ հոգի: Դուն մի գարմանար որ քեզի ըսի թէ պէտք է վերստին ծնիս» (Յովհ. 3:5):

Քրիստոս փրկութեան դուռն է Հրեաներու եւ Հեթանոսներու համար հաւասարապէս: Ինքն է Ծանապարհը, Կեանքն ու Յարութիւնը բոլոր հաւատացողներուն:

Խաչելութենէն առաջ մեր Տէրը իր Առաքեալներուն միտքը կը պատրաստէ ապագայի դէպքերուն առնչութեամբ:

Պիղատոս Խաչին վրայ Քրիստոսի յանցանքը գրեց եբրայերէն, լատիներէն եւ յունարէն լեզուներով. «Յիսուս Նազովրեցի, Հրեաներուն Թագաւորը»:

Եբրայերէնը կրօնքի լեզուն էր, լատիներէնը՝ օրէնքի եւ իշխանութեան, իսկ յունարէնը՝ մշակութի, իմաստասիրութեան եւ գիտութեան:

Հրաշափառ Յարութենէն ետք մեր Տէրը Պետրոսը վերահաստատեց առաքելական իր նախորդ դիրքին մէջ՝ արածելու համար Տիրոջ Ոչխարները:

Յովհաննէս Առաքեալ հետեւեալ խօսքով կը փակէ իր Աւետարանը. «Տակաւին շատ մը բաներ ալ կան, որ Յիսուս կատարեց, որոնք եթէ մանրամասնութեամբ գրուած ըլլային, կարծեմ թէ նոյնիսկ աշխարհը անբաւարար պիտի ըլլար պարունակելու այդ բոլոր գործիւնները» (Յովհ. 21:25):

Յովհաննէսի Աւետարանը խորունկ է եւ յուսաբանող: Ան հեղինակն է նաեւ Ընդհանրական Առաջին, Երկրորդ եւ Երրորդ Թուղթերուն, ինչպէս նաեւ Յայտնութեան Գիրքին, բոլորն ալ Նոր Կտակարանին մէջ:

Եթէ Աստուածաբանական նիւթերու շուրջ կ'ուզէք քարոզել, կարդացէք Պօղոս Առաքեալի նամակները: Իսկ եթէ կը փափաքիք թափանցել Քրիստոնէական Կրօնի սրտին, կարդացէք Յովհաննոսի Աւետարանը: Յովհաննէս Քրիստոսի հետ իր մշակած սերտ յարաբերութեան եւ գործակցութեան շրնորհի ունեցաւ զգայուն ոգի մը, որ զինք դարձուց Սիրոյ Առաքեալը: Անշուշտ կը ծագի հետեւեալ հարցը: Քրիստոս բոլոր աշակերտները չսիրե՞ց. բնական է սիրեց, Ան չհետաքրքրուեցա՞ւ համայն մարդկութեամբ, անշուշտ թէ հոգաց եւ մտածեց բոլորին մասին: Արդեօք ան չսիրե՞ց աշխարհը. Աստուած սիրեց եւ Քրիստոս ալ բնականաբար սիրեց, ինչպէս Յովհաննէս

Աւետարանիչ կը գրէ. «Աստուած այնպէս սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր Միածին Որդին տուաւ, որպէսզի ով որ հաւատայ անոր՝ չկորսուի, այլ ընդունի յաիտենական կեանքը» (Յովհ. 3:16): Հապա ինչո՞ւ համար յատկապէս շեշտել եւ ըսել. «Եւ աշակերտներէն մէկը զոր Յիսուս կը սիրէր, նստած էր Յիսուսի քով» (Յովհ. 13:23): Քրիստոս բոլորը սիրելով հանդերձ, մասնաւոր սէր ունէր, օրինակի համար Ան լացաւ Ղազարոսի գերեզմանին վրայ, իսկ խաչելութեան ժամանակ Ս. Կոյսը յանձնեց Յովհաննէս Առաքեալի խնամքին: Այս է մասնաւոր սիրոյ եւ վստահութեան արտայայտութիւնը:

Ինչպէս յիշեցի, Յովհաննէսի մէջ անարատ եւ ճշմարիտ սէրը զարգացաւ Քրիստոսի հետ իր ունեցած շփումներու պատճառաւ: Մենք բոլորս ալ բնածին սէր ունինք մեր մէջ, սակայն մասնաւոր մէկը սիրելը աւելի ուշադրութեան եւ զոհողութեան կը կարօտի եւ այդ կու գայ իրար ճանչնալով եւ կատարուած գործերուն հաւատալով: Իսկ առանց անանձնական եւ անկեղծ սէր ունենալը մեր մէջ կը զարգանայ Աստուծոյ շնորհներով, որ մեզի տրուած երկնային պարգէւ մըն է: Յովհաննէս ալ ունեցաւ բարկութեան եւ փոթորկալից պահեր, սակայն յաղթահարեց այդ բոլորին՝ շնորհիւ իր զգայուն եւ ազնիւ ոգիին... անոր մէջ անեցաւ սիրոյ եւ ըմբռնողութեան ոգին եւ զինք դարձուց հասուն եւ մարդկային սիրտը ողորկող ու խրատող Աւետարանչին՝ քարոզելով, որ իրար սիրեն եւ թէ «Աստուած սէր է»:

Յովհաննէս ձկնորսութեան արհեստը ժառանգած էր իր հօրմէն: Հայրը կեանքի մէջ յաջողած անձ մըն էր եւ նիւթական վիճակն ալ լաւ էր եւ կրքնար ծառաներ ունենալ իր տան մէջ: Սակայն Յովհաննէս անհանդարտ էր եւ կը զգար թէ իր կեանքին մէջ բան մը կը պակսէր: Երբ ան լսեց, որ մարգարէ մը անապատին մէջ կը քարոզէր եւ Յորդանան Գետին մէջ մկրտութիւն կը կատարէր, խնդրեց իր հօրմէն, որ մի քանի օր աշխատանքէ զերծ կացուցանէր զինք, որպէսզի երթար եւ լսէր այս անձանօթին խօսքը: Ուստի Յովհաննէս Անդրեասին հետ, որ նոյնպէս ձկնորս մըն էր, գնաց Մկրտչին պատգամը լսելու: Զգայուն այս երիտասարդին համար չափազանց տպաւորիչ էր այն տեսարանը, երբ քարոզչին հրաւերին ընդառաջելով մարդիկ Յորդանան Գետին մէջ մտնելով կը մկրտուէին ապաշխարելով եւ դարձի գալով: Սակայն այս դէպքերուն մէջ աւելի խորունկ տպաւորութիւն թողուց իր վրան, երբ Մկրտիչը բարձրաձայն յայտարարեց, ըսելով. «Ես ձեզ կը մկրտեմ ջրով. ձեր մէջ կայ մէկը, զոր դուք չէք չանչնար, որ ինձմէ յետոյ պիտի գայ եւ որուն կօշիկներուն կապերը քակելու արժանի չեմ ես... Ահա՛ Գառն Աստուծոյ, որ կը բառնայ աշխարհի մեղքը» (Յովհ. 1:26—29):

Յովհաննէս դարձուց իր գլուխը եւ ուշադրութիւնը կեդրոնացուց այն կէտին վրայ, որ Մկրտիչը ցոյց կու տար: Ան ցնցում մը ունեցաւ՝ տեսնելով իր զարմիկը՝ Յիսուսը, Մարիամի եւ Յովսէփի զաւակը, որուն մասին Մկրտիչը կ'ըսէր «Գառն Աստուծոյ»: Ան հոգեկան ցնծութեան մէջ էր եւ մտքով տաւրած ի տես այս անակնկալ դէպքին եւ յայտարարութեան: Ան յաջորդ օրը գնաց Յիսուսի մօտ՝ անոր հետ խօսակցելու համար, երբ արդէն իսկ շատ մը խորհուրդներ կը տողանցէին իր մտքին մէջ եւ վստահաբար իրենց պատանեկութեան օրերուն Նազարէթի մէջ ընտանեկան այցելութիւններ կատարած էին եւ Յիսուսի հետ խաղած էր նեղ փողոցներուն մէջ: Իսկ հիմա Ան «Գառն Աստուծոյ» կը յայտարարուէր:

Այս առաջին յայտարարութենէն եւ Յիսուսի հետ իր հանդիպման առաջին իսկ րոպէէն Յովհաննէս հաւատաց որ Յիսուս՝ իրապէս «Գառն Աստուծոյ» էր, եւ իր Աւետարանին մէջ գործածուած գլխաւոր բառերէն մին է

«հաւատալ» բառը, որ մօտ հարիւր անգամ գործածուած է: Ան անձնական փորձառութեամբ զգաց հաւատքի զօրութիւնը եւ հաւատալու իրականութիւնը: Ան կը գրէ. «...ան գիտէ որ ճշմարիտ կ'ըսէ որպէսզի դուք ալ հաւատաք» (Յովհ. 19:35): Յիսուս կը սիրէ բոլոր մարդոց, սակայն Ան մասնաւոր սէր ունի այն մարդոց նկատմամբ, որոնք կը հաւատան իրեն: Թերեւս բացի ազգականական կապէ, գլխաւոր պատճառը այն է, որ Յովհաննէս հաւատաց իրեն եւ Յիսուս մասնաւոր սէր ունեցաւ անոր նկատմամբ եւ գիտցաւ որ Յովհաննէս իր Աւետարանը տարածելու առաքելութեան մէջ մեծ բաժին մը պիտի ունենար:

Յովհաննէս նախ հաւատաց եւ ապա անեցաւ սիրոյ մէջ: Իր Աւետարանին մէջ ան չի յիշուիր անունով, այլ «Եւ աշակերտներէն մէկը զոր Յիսուս կը սիրէր» (Յովհ. 13:23): Ան Յիսուսի մօտ նստած էր եւ մեզի կը պատգամէ Տիրոջ խօսքը. «Նոր պատուիրան կու տամ ձեզի, որ սիրէք զիրար. ինչպէս եւ ձեզ սիրեցի, դուք ալ սիրեցէք զիրար» (Յովհ. 13:34): Գլխաւոր բնաբանն է «սիրեցէք զիրար... ատով ամէնքը պիտի գիտնան թէ դուք իմ աշակերտներս էք» (Յովհ. 13:35):

Օր մը երբ Յովհաննէս քարոզչական առաքելութեան մէջ էր, բան մը զինք վրդովեց: Ան վերադարձին հետեւեալը հաղորդեց Քրիստոսի. «Վարդապետ, մէկը տեսանք որ քու անունովդ դէտեր կը հանէր, բայց մեզի հետ չէր շրջեր. եւ արգիլեցինք զայն: Եւ ան ըսաւ. Արգելք մի՛ ըլլաք անոր, որովհետեւ չկայ մէկը որ իմ անունովս զօրաւոր գործեր ընէ ու կարենայ ինծի հայհոյել. վասնզի ով որ մեզի հակառակ չէ՝ մեր կողմն է» (Մարկ. 9:37—39): Յովհաննէս տակաւին իր տուած պատգամը «սիրեցէք զիրար»-ը գործնականի չէր վերածած:

Աստուած եւ Իր սէրը սահմանափակուած չէ: Յովհաննէս Քրիստոսի տուած պատասխանը ստանալէ ետք անի ընդարձակեց իր միտքն ու հոգին եւ անի հասունացաւ իր քարոզչական առաքելութեան մէջ, գրելով. «Սիրելիներ, սիրենք զիրար, քանի որ սէրը Աստուծմէ է. ամէն ոք որ կը սիրէ՝ Աստուծմէ ծնած է եւ կը ճանչնայ զԱստուած» (Ա. Յովհ. 4:7): Յովհաննէսի համար ըսինք, որ զգայուն եւ ազնիւ հոգի ունեցող երիտասարդ մըն էր եւ սակայն որպէս մարդ՝ ի պահանջել հարկին բարկացող, համարձակ եւ քաջ մէկը, ճշմարտապէս իրաւացի իր եղբօրը հետ «Որդիք Որոտման» կոչուելու:

Մենք այն տպաւորութիւնը չունենանք, որ Յովհաննէս տարիքով միւս Առաքեալներէն փոքր ըլլալուն պատճառաւ տկար էր: Քրիստոսի խաչելութեան ժամանակ խաչի մօտ միայն Յովհաննէս ներկայ էր քաջաբար: Քրիստոս խաչին վրայէն նայեցաւ իր շուրջ գտնուողներուն, որոնք ատելութեամբ լեցուած էին եւ հոգիով ալ կոյր էին: Սակայն Յիսուս տեսաւ նաեւ Յովհաննէս Աւետարանիչը, որ հասկացած էր իր առաքելութեան նպատակը, խաչելութեան եւ յափտեմական կեանքի իմաստը: Յովհաննէսի ներկայութիւնը նշանն էր իսկական սիրոյ եւ քաջութեան սիրոյ, որովհետեւ ան որպէս Առաքեալ ճանչցուած էր ժողովուրդէն եւ իր կեանքը վտանգի տակ դնելով հետեւեցաւ անցորդարձերուն եւ Աստուածորդուն ու իր մանկութեան ընկերոջ եւ ազգականին անարգ խաչելութեան եւ մահուան: Ան ճշմարիտ սիրոյ պատգամը վերածած էր գործնականի...:

Քրիստոս իր տագնապին եւ ցաւերուն մէջ դառնալով իր մօրը եւ Յովհաննէսին, ըսաւ. «Ո՛վ կին, ահա՛ քու որդիդ: Ապա ըսաւ աշակերտին. Ահա՛ քու մայրդ: Եւ այդ պահէն աշակերտը իր քով առաւ զայն» (Յովհ. 19:27):

Քրիստոսի հրաշափառ Յարութենէն ետք Առաքեալներ քարոզեցին Երուսաղէմի մէջ: Հալածանքները սկսան, անոնց արգիլուեցաւ քարոզել եւ ունանք ալ բանտարկուեցան: Պետրոս եւ Յովհաննէս պատասխանեցին. «Եթէ Աստուծոյ առջեւ արդար է աւելի ձեզի՝ մտիկ ընել քան Աստուծոյ՝ դո՛ւք որոշեցէք: Իսկ մենք չենք կրնար չխօսիլ, ինչ որ տեսանք եւ լսեցինք» (Գործք 4:19—20): Անոնք սպառնալիքներու ենթարկուեցան, սակայն քաջաբար շարունակեցին իրենց քարոզչութիւնը՝ վկայութիւն տալով Քրիստոսի իսկական Յարութեան: Անոնք այլեւս բոլորովին փոխուած եւ գօտեպնդուած էին Քրիստոսի սիրոյն մէջ:

Սիրոյ Առաքեալ՝ Յովհաննէսի մասին կ'ըսուի, թէ երբ շատ ծերացաւ եւ չէր կրնար քալել, հաւատացեալներ զինք տունէ տուն կը փոխադրէին, որպէսզի քարոզէր: Սակայն ան միշտ կը կրկնէր, ըսելով. «զիրար սիրեցէք»: Օր մը մէկը համարձակութիւնը ունեցաւ հարցնելու, թէ ան ինչո՞ւ համար ուրիշ բան չէր ըսեր: Յովհաննէս Աւետարանիչ պատասխանեց. «Որովհետեւ ասիկա մեր Տիրոջ միակ պատգամն է: Եթէ մենք ասիկա կատարենք, ուրիշ որեւէ բանի պէտք չենք ունենար»:

Յովհաննէս բացառիկ կարողութիւն ունէր ըմբռնելու հոգեւոր ճշմարտութիւնը: Ան տաղանդաւոր ու զօրաւոր միտք մը ունէր: Ան մեզի կը նկարագրէ մարդեղութեան խորհուրդը: Ան խորապէս կը գիտակցի եւ կը հասկնայ Աստուածորդւոյն աշխարհ գալը: Վերջապէս միայն ինքն է, որ կը գրէ. «Սկիզբէն էր Բանը, եւ Բանը Աստուծոյ քով էր, եւ Բանը Աստուած էր...: Եւ Բանը մարմին եղաւ եւ բնակեցաւ մեր մէջ. եւ մենք տեսանք անոր փառքը, որպէս շնորհով եւ ճշմարտութեամբ լի Միածնի փառք՝ ստացուած Հօրմէն» (Յովհ. 1: 1, 14): Այս Աւետարանին բացումը գրական բարձր մակարդակ մը կը ներկայացնէ:

Յովհաննէս Քրիստոսը կը հասկնայ որեւէ աշակերտէ աւելի: Ան այս կարողութիւնը ունէր եւ խորապէս կը զգար ամէն բան: Ան գիտէր Քրիստոսի մօտնալու գաղտնիքը: Ան կը գրէ. «Իսկ եթէ լոյսին մէջ քալենք, ինչպէս որ ինքն է լոյսին մէջ՝ հաղորդութեան մէջ կ'ըլլանք իրարու հետ, եւ անոր Որդիին՝ Յիսուսի արիւնը կը մաքրէ մեզ ամէն մեղքէ» (Ա. Յովհ. 1:7): «Ով որ կ'ըսէ թէ ինք կը բնակի Անոր մէջ՝ պարտի այնպէս ընթանալ, ինչպէս որ ա՛ն ընթացաւ» (Ա. Յովհ. 2:6):

Յովհաննէս Աւետարանիչ Սիրոյ Աղբիւրէն՝ Քրիստոսէն ստացաւ սիրելու շնորհը, որ ուսումով եւ կամ պաշտօնով ձեռք չի բերուիր: Ան իր սիրելու ձիրքը, մտային եւ հոգեկան կարողութիւնները միացնելով մեզ կ'առաջնորդէ լոյսի ճամբայէն: Ան մեծ սիրտ մը ունէր:

Այս գրութիւնը կ'եզրափակենք հետեւեալ մէջբերումով. «Ան որ սկիզբէն էր, որուն մասին լսեցինք, որուն ականատես իսկ եղանք, որուն նայեցանք, եւ մեր ձեռքերը շօշափեցին կենաց Բանը—քանի որ կեանքը յայտնուեցաւ, եւ մենք տեսանք, կը վկայենք ու կը պատմենք ձեզի այն յաիտենական կեանքը՝ որ Հօր մօտ էր եւ յայտնուեցաւ մեզի—զա՛յն է որ տեսանք ու լսեցինք եւ կը պատմենք նաեւ ձեզի, որպէսզի դուք ալ հաղորդակից ըլլաք մեզի հետ. եւ մեր հաղորդութիւնը Հօր հետ է եւ անոր Որդիին՝ Յիսուս Քրիստոսի հետ: Եւ այս բանը կը գրենք ձեզի, որպէսզի կատարեալ ըլլայ ձեր ուրախութիւնը» (Ա. Յովհ. 1:1—4):